# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ԳԵՂ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստի

ք. Գավառ «30» «04» 2021թ.

ժ 13:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Հ. Սիոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գեղամյան, Ս. Մեսրոպյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

### ԳԵՂ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ

Հ. Սիոյան

1. Մասնակցի հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

### 1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.

1. Քանի որ գնումը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը 2021 թվականի մարտի 27-ին ծանուցել էր մասնակիցներին 30.04.2021թ.-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններն մասնակցելու վերաբերյալ, սակայն մասնակիցները չէին ներկայացել բանակցություններին:

Արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները թողնվեց անփոփոխ և ունեցավ հետևյալ տեսքը.

Չափաբաժին N 1 դիզելային վառելիքի ձեքբերում

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Մաքս Օիլ» ՍՊԸ | 2520000 | 1945000 | 389000 | 2334000 |
| 2 | «Ֆլեշ» ՍՊԸ | | 2100000 | 420000 | 2520000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

### 2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշման ընդունում.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Մաքս Օիլ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 08.05.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Զոր. Անդրանիկի 59 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ____________________ Հ. Սիոյան

Անդամներ՝ ____________________ Ա. Գեղամյան

____________________ Ս. Մեսրոպյան

Քարտուղար՝ ____________________ Ժ. Խաչատրյան